Երկրորդ ընթերցում

լրամշակված նախագիծ

Կ-535-23.03.2023-ՊԱ-011

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

«ՓՐԿԱՐԱՐ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Փրկարար ծառայության մասին» 2005 թվականի հուլիսի 8-ի ՀՕ-171-Ն օրենքի (այսուհետ՝ օրենք) 5-րդ գլխի վերնագիրը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«**ՓՐԿԱՐԱՐ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՓՐԿԱՐԱՐԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԱՆՑՆԵԼԸ, ԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆԻ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ, ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՒՄԸ (ՈՐԱԿԱՎՈՐՈՒՄԸ) ԵՎ ԱՏԵՍՏԱՎՈՐՈՒՄԸ**»:

Հոդված 2. Օրենքի 32-րդ հոդվածի 12-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«12. Փրկարարական ծառայության անցնող քաղաքացու (ծառայողի) և Լիազոր մարմնի միջև կնքվում է 3-12 ամիս կամ 1-5 տարի ժամկետով փրկարարական ծառայության անցնելու մասին պայմանագիր, որը ստորագրում է՝

1) բարձրագույն և գլխավոր խմբերի պաշտոն զբաղեցնող ծառայողների համար Լիազոր մարմնի ղեկավարը.

2) ավագ, միջին և կրտսեր խմբերի պաշտոն զբաղեցնող ծառայողների համար փրկարար ծառայության տնօրենը:»:

Հոդված 3. Օրենքը լրացնել նոր հոդվածով՝ հետևյալ բովանդակությամբ.

«**Հոդված 34.1. Ծառայողների ատեստավորումը**

1. Փրկարար ծառայության տնօրենի տեղակալների, փրկարար ծառայության բարձրագույն, գլխավոր, ավագ, միջին և կրտսեր խմբերի ծառայողների (բացառությամբ՝ Լիազոր մարմնի ուսումնական հաստատությունում փրկարարական ծառայության պաշտոն զբաղեցնող ծառայողների) ատեստավորումն անցկացվում է զբաղեցրած պաշտոնին համապատասխանությունը ստուգելու և հավելավճար հաշվարկելու կամ զբաղեցրած

պաշտոնին համապատասխանությունը ստուգելու և հավելավճարի հաշվարկումը շարունակելու նպատակով:

2. Ծառայողի ցանկությամբ սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված ատեստավորմանը կարող է նախորդել նրա վերապատրաստումը: Ծառայողը մինչև ատեստավորումը իրավունք ունի մեկ անգամ անցնելու վերապատրաստում: Ատեստավորման նպատակով վերապատրաստումը անցկացվում է միայն առաջին անգամ ատեստավորման համար:

3. Փրկարար ծառայությունում զբաղեցրած պաշտոնին հավասարազոր այլ պաշտոնի նշանակվելուց հետո փրկարարական ծառայողի ատեստավորման արդյունքները պահպանվում են, իսկ մրցույթի արդյունքներով առաջխաղացմամբ պաշտոնի նշանակվելիս ծառայողը ենթակա է ատեստավորման: Մինչև զբաղեցրած պաշտոնին համապատասխանությունը ստուգելու և հավելավճար հաշվարկելու նպատակով ատեստավորվելը առաջխաղացմամբ պաշտոնի նշանակված ծառայողը պահպանում է նախորդ պաշտոնում հաշվարկված ատեստավորման արդյունքները:

4. Հաստիքների կրճատման, կառուցվածքային փոփոխության դեպքում՝ Փրկարար ծառայությունում այլ պաշտոնի նշանակվելիս, այդ թվում՝ պաշտոնի մեկ աստիճանով իջեցման դեպքում, ծառայողներն ատեստավորման ենթակա չեն, իսկ ատեստավորված ծառայողները պահպանում են ատեստավորման արդյունքները, բացառությամբ՝ սույն հոդվածի 9-րդ մասով նախատեսված ժամկետը լրանալու դեպքերի:

5. Ատեստավորման կարգը սահմանվում է Կառավարության որոշմամբ:

6. Ատեստավորման անցկացման նպատակով Լիազոր մարմնի ղեկավարի հրամանով ստեղծվում է ատեստավորման հանձնաժողով (հանձնաժողովներ):

7. Փրկարար ծառայությունում առաջին անգամ պաշտոնի նշանակված ծառայողը ենթակա է ատեստավորման ոչ շուտ, քան պաշտոնի նշանակվելուց վեց ամիս անց: Նա սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված ատեստավորմանը պարտավոր է մասնակցել վեցամսյա ժամկետը լրանալուց հետո երեք տարվա ընթացքում:

8. Ատեստավորման արդյունքներով հավելավճար ստանալու իրավունք ձեռք բերելու դեպքում հավելավճարը հաշվարկվում է այդ իրավունքի ձեռքբերման օրվանից:

9. Համապատասխան պաշտոնում ատեստավորված և տվյալ պաշտոնի խմբի համար սահմանված չափով հավելավճար ստացող ծառայողները պարտավոր են ատեստավորվել յուրաքանչյուր երեք տարին մեկ անգամ՝ զբաղեցրած պաշտոնին համապատասխանությունը ստուգելու և հավելավճարի հաշվարկումը շարունակելու համար: Զբաղեցրած պաշտոնին համապատասխանությունը ստուգելու և հավելավճարի հաշվարկումը շարունակելու

նպատակով ծառայողը ատեստավորման համար կարող է դիմել նախորդ ատեստավորման արդյունքներով հավելավճար հաշվարկելու իրավունքը ձեռք բերելու օրվանից երկու տարի հետո: Մրցույթի արդյունքներով առաջխաղացմամբ պաշտոնի նշանակված ծառայողը հավելավճար հաշվարկելու նպատակով ատեստավորման համար դիմում է պաշտոնի նշանակվելուց հետո մեկ տարվա ընթացքում:

10. Հղիության և ծննդաբերության, ինչպես նաև մինչև երեք տարեկան երեխայի խնամքի համար տրամադրվող արձակուրդում գտնվող ծառայողը ենթակա է ատեստավորման ոչ շուտ, քան արձակուրդից վերադառնալուց երեք ամիս հետո: Սույն մասով նախատեսված ծառայողներն ատեստավորման համար պարտավոր են դիմել եռամսյա ժամկետի ավարտից հետո երեք տարվա ընթացքում: Արձակուրդում կամ գործուղման մեջ գտնվող կամ ժամանակավոր անաշխատունակ ծառայողը ենթակա է ատեստավորման ոչ շուտ, քան ծառայության անցնելուց երկու ամիս հետո:

11. Եթե ծառայողը ատեստավորման արդյունքներով ստացել է սույն հոդվածի 13-րդ մասի 1-ին կամ 2-րդ կետով նախատեսված եզրակացությունը, որից հետո նրան տրամադրվել է հղիության և ծննդաբերության, ինչպես նաև մինչև երեք տարեկան երեխայի խնամքի արձակուրդ, ապա հավելավճարի հաշվարկման ժամկետը արձակուրդի ժամանակահատվածում կասեցվում է: Այն վերսկսվում է նշված տեսակի արձակուրդից վերադառնալու օրը:

12. Ատեստավորման ենթակա ծառայողն ատեստավորման օրվանից ոչ ուշ, քան մեկ ամիս առաջ տեղեկացվում է ատեստավորման անցկացման ժամկետի մասին:

13. Սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված ատեստավորման արդյունքներով կայացվում է հետևյալ եզրակացություններից որևէ մեկը՝

1) համապատասխանում է զբաղեցրած պաշտոնին և ենթակա է հավելավճար հաշվարկելու.

2) համապատասխանում է զբաղեցրած պաշտոնին և ենթակա է շարունակելու հավելավճարի հաշվարկումը.

3) չի համապատասխանում զբաղեցրած պաշտոնին և ենթակա չէ հավելավճար հաշվարկելու.

4) չի համապատասխանում զբաղեցրած պաշտոնին և ենթակա չէ շարունակելու հավելավճարի հաշվարկումը:

14. Ատեստավորման մասնակցած այն ծառայողները, որոնց վերաբերյալ կայացվել է սույն հոդվածի 13-րդ մասի 3-րդ կամ 4-րդ կետերով նախատեսված եզրակացությունը, ատեստավորման ժամկետի ընթացքում ունեն ատեստավորմանը կրկին մասնակցելու

առնվազն երկու հնարավորություն՝ համաձայն Լիազոր մարմնի ղեկավարի կողմից հաստատված ժամանակացույցի:

15. Սույն հոդվածի 13-րդ մասով նախատեսված եզրակացությունները հաստատվում են տվյալ ծառայողին պաշտոնի նշանակելու իրավասություն ունեցող պաշտոնատար անձի հրամանով:

16. Ծառայողը պարտադիր ծանոթացվում է ատեստավորման արդյունքներին և կայացված եզրակացությանը: Ծառայողն իրավունք ունի վերադասության կարգով բողոքարկելու ատեստավորման արդյունքները և կայացված եզրակացությունը՝ դրանց ծանոթանալու օրվանից հետո ոչ ուշ, քան հինգ աշխատանքային օրվա ընթացքում կամ դատական կարգով:

17. Հավելավճար ստացող ծառայողներին հաշվարկված հավելավճարի վճարումը դադարում է՝ Լիազոր մարմնի ուսումնական հաստատությունում փրկարարական ծառայության պաշտոնի նշանակվելիս:

18. Ատեստավորման արդյունքներով հաշվարկվող հավելավճարի չափերը և վճարման կարգը սահմանվում են Կառավարության որոշմամբ: Սույն հոդվածի համաձայն հավելավճար հաշվարկվելու դեպքում ծառայողներին «Պետական պաշտոններ և պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» օրենքի 32-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված լրավճարը և զինվորական ծառայության պաշտոն զբաղեցնողների համար նախատեսված հավելումները չեն հաշվարկվում:»:

Հոդված 4. Օրենքի 36-րդ հոդվածի 1-ին մասում՝

1) «ա» կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«ա) բարձրագույն, գլխավոր ավագ և միջին խմբերի պաշտոն զբաղեցնողները՝ ծառայության այլ վայր հավասարազոր պաշտոնին՝ Փրկարար ծառայության տվյալ պաշտոնում առնվազն մեկ տարի ծառայելուց հետո, իսկ կրտսեր խմբի պաշտոն զբաղեցնող ծառայողների փոխադրման դեպքում՝ առնվազն վեց ամիս ծառայելուց հետո.»,

2) «դ» կետն ուժը կորցրած ճանաչել:

Հոդված 5. Օրենքի 61-րդ հոդվածում՝

1) 1-ին մասի «գ» կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«գ) ծառայության մեջ գտնվելու սահմանային տարիքը լրանալու դեպքում.»,

2) 1-ին մասի «ժգ» կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«ժգ) պայմանագրի ժամկետը լրանալու կապակցությամբ կամ պայմանագրի գործողության դադարման դեպքում.»,

3) 1-ին մասը լրացնել «ժդ» կետով՝ հետևյալ բովանդակությամբ.

«ժդ) սույն օրենքի 34.1-ին հոդվածի 7-րդ, 9-րդ կամ 10-րդ մասերով նախատեսված ժամկետներում սույն օրենքի 34.1-ին հոդվածի 1-ին մասով նախատեսված ատեստավորմանը չմասնակցելու կամ սույն օրենքի 34.1-ին հոդվածի 14-րդ մասով նախատեսված ժամկետում ատեստավորմանը կրկին չմասնակցելու կամ ատեստավորման արդյունքում սույն օրենքի 34.1-ին հոդվածի 13-րդ մասի 3-րդ կամ 4-րդ կետերով նախատեսված եզրակացություն կայացվելու դեպքում:»,

4) լրացնել հետևյալ բովանդակությամբ՝ նոր 3-րդ մաս.

«3. Սույն հոդվածի 1-ին մասի «ժդ» կետի պահանջները չեն տարածվում Լիազոր մարմնի ուսումնական հաստատությունում սովորող, այդ թվում՝ Լիազոր մարմնի կողմից այլ ուսումնական հաստատություններ գործուղված ծառայողների վրա:»:

Հոդված 6. Օրենքի 62-րդ հոդվածի 1-ին մասի «ա» և «բ» կետերում «ստորաբաժանման լուծարման կամ վերակազմակերպման» բառերը փոխարինել «կառուցվածքային փոփոխության» բառերով:

Հոդված 7. Օրենքի 71-րդ հոդվածի 2-րդ մասի «բ» կետում «ստորաբաժանման լուծարման կամ վերակազմակերպման» բառերը փոխարինել «կառուցվածքային փոփոխության» բառերով, իսկ «համարժեք» բառը՝ «հավասարազոր» բառով:

Հոդված 8. Եզրափակիչ մաս և անցումային դրույթներ

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում 2023 թվականի մայիսի 1-ից:

2. Փրկարար ծառայության այն ծառայողները, ովքեր ցանկություն են հայտնել սույն օրենքի 34.1-ին 1-ին մասով նախատեսված ատեստավորումը անցնել վերապատրաստումից հետո, այդ իրավունքը կարող են իրականացնել 2024 թվականի հունվարի 1-ից հետո՝ Լիազոր մարմնի ղեկավարի կողմից հաստատված ժամանակացույցի համաձայն:

3. Փրկարար ծառայության գործող կառուցվածքում ներառված, սակայն Ներքին գործերի նախարարության ձևավորումից հետո գործունեությունը դադարեցվող հիմնական մասնագիտական կառուվածքային ստորաբաժանումների ծառայողների ցանկը, ովքեր ենթակա չեն ատեստավորման, սահմանվում է Լիազոր մարմնի ղեկավարի հրամանով:

4. Սույն օրենքից բխող ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերն ընդունվում են սույն օրենքն ընդունվելուց հետո՝ մեկ ամսվա ընթացքում:

ՏԵՂԵԿԱՆՔ

«ՓՐԿԱՐԱՐ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ

Հոդված 1. «Փրկարար ծառայության մասին» 2005 թվականի հուլիսի 8-ի ՀՕ-171-Ն օրենքի (այսուհետ՝ օրենք) 5-րդ գլխի վերնագիրը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«**ՓՐԿԱՐԱՐ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՓՐԿԱՐԱՐԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԱՆՑՆԵԼԸ, ԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆԻ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ, ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՒՄԸ (ՈՐԱԿԱՎՈՐՈՒՄԸ) ԵՎ ԱՏԵՍՏԱՎՈՐՈՒՄԸ**»:

Հոդված 2. Օրենքի 32-րդ հոդվածի 12-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«12. Փրկարարական ծառայության անցնող քաղաքացու (ծառայողի) և Լիազոր մարմնի միջև կնքվում է 3-12 ամիս կամ 1-5 տարի ժամկետով փրկարարական ծառայության անցնելու մասին պայմանագիր, որը ստորագրում է՝

1) բարձրագույն և գլխավոր խմբերի պաշտոն զբաղեցնող ծառայողների համար Լիազոր մարմնի ղեկավարը.

2) ավագ, միջին և կրտսեր խմբերի պաշտոն զբաղեցնող ծառայողների համար փրկարար ծառայության տնօրենը:»:

Հոդված 3. Օրենքը լրացնել նոր հոդվածով՝ հետևյալ բովանդակությամբ.

«**Հոդված 34.1. Ծառայողների ատեստավորումը**

1. Փրկարար ծառայության **տնօրենի տեղակալների, փրկարար ծառայության** բարձրագույն ~~(բացառությամբ՝ Լիազոր մարմնի ուսումնական հաստատությունում փրկարարական ծառայության պաշտոն զբաղեցնող ծառայողների)~~, գլխավոր, ավագ, միջին և կրտսեր խմբերի ծառայողների **(բացառությամբ՝ Լիազոր մարմնի ուսումնական հաստատությունում փրկարարական ծառայության պաշտոն զբաղեցնող ծառայողների)** ատեստավորումն անցկացվում է **զբաղեցրած պաշտոնին համապատասխանությունը ստուգելու և** հավելավճար հաշվարկելու կամ **զբաղեցրած պաշտոնին համապատասխանությունը ստուգելու և** հավելավճարի հաշվարկումը շարունակելու նպատակով:

2. Ծառայողի ցանկությամբ սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված ատեստավորմանը կարող է նախորդել նրա վերապատրաստումը: Ծառայողը մինչև ատեստավորումը իրավունք ունի մեկ անգամ անցնելու վերապատրաստում: Ատեստավորման նպատակով վերապատրաստումը անցկացվում է միայն առաջին անգամ ատեստավորման համար:

3. Փրկարար ծառայությունում զբաղեցրած պաշտոնին հավասարազոր այլ պաշտոնի նշանակվելուց հետո փրկարարական ծառայողի ատեստավորման արդյունքները պահպանվում են, իսկ մրցույթի արդյունքներով առաջխաղացմամբ պաշտոնի նշանակվելիս ծառայողը ենթակա է ատեստավորման: Մինչև **զբաղեցրած պաշտոնին համապատասխանությունը ստուգելու և** հավելավճար հաշվարկելու նպատակով ատեստավորվելը առաջխաղացմամբ պաշտոնի նշանակված ծառայողը պահպանում է նախորդ պաշտոնում հաշվարկված ատեստավորման արդյունքները:

4. Հաստիքների կրճատման, կառուցվածքային փոփոխության դեպքում՝ Փրկարար ծառայությունում այլ պաշտոնի նշանակվելիս, այդ թվում՝ պաշտոնի մեկ աստիճանով իջեցման դեպքում, ծառայողներն ատեստավորման ենթակա չեն, **իսկ ատեստավորված ծառայողները պահպանում են ատեստավորման արդյունքները,** բացառությամբ՝ սույն հոդվածի ~~8-րդ~~ 9-~~րդ~~ մասով նախատեսված ժամկետը լրանալու դեպքերի:

~~4~~**5**. Ատեստավորման կարգը սահմանվում է Կառավարության որոշմամբ:

~~5~~**6**. Ատեստավորման անցկացման նպատակով Լիազոր մարմնի ղեկավարի հրամանով ստեղծվում է ատեստավորման հանձնաժողով (հանձնաժողովներ):

~~6~~**7**. Փրկարար ծառայությունում ~~համապատասխան պաշտոնի~~ առաջին անգամ **պաշտոնի** նշանակված ծառայողը **ենթակա է ատեստավորման ոչ շուտ, քան** ~~կարող է ատեստավորում անցնել~~ պաշտոնի նշանակվելուց ~~ոչ շուտ, քան~~ վեց ամիս անց: Նա սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված ատեստավորման**ը** ~~համար դիմում է~~ **պարտավոր է մասնակցել** վեցամսյա ժամկետը լրանալուց հետո երեք տարվա ընթացքում:

~~7~~**8**. Ատեստավորման արդյունքներով հավելավճար ստանալու իրավունք ձեռք բերելու դեպքում հավելավճարը հաշվարկվում է այդ իրավունքի ձեռքբերման օրվանից:

~~8~~**9**. Համապատասխան պաշտոնում ատեստավորված և տվյալ պաշտոնի խմբի համար սահմանված չափով հավելավճար ստացող ծառայողներն~~ն~~**ը պարտավոր են ատեստավորվել** ~~ատեստավորվում են~~ յուրաքանչյուր երեք տարին մեկ անգամ՝ **զբաղեցրած պաշտոնին համապատասխանությունը ստուգելու և** հավելավճարի հաշվարկումը շարունակելու համար: **Զբաղեցրած պաշտոնին համապատասխանությունը ստուգելու և հ**~~Հ~~ավելավճարի հաշվարկումը շարունակելու նպատակով ~~ատեստավորման համար դիմելու իրավունքը~~

~~ծառայողի մոտ ծագում է~~ **ծառայողը ատեստավորման համար կարող է դիմել** նախորդ ատեստավորման արդյունքներով հավելավճար հաշվարկելու իրավունքը ձեռք բերելու օրվանից երկու տարի հետո: Մրցույթի արդյունքներով առաջխաղացմամբ պաշտոնի նշանակված ծառայողը հավելավճար հաշվարկելու նպատակով ատեստավորման համար դիմում է պաշտոնի նշանակվելուց հետո մեկ տարվա ընթացքում:

~~9~~**10**. Հղիության և ծննդաբերության, ինչպես նաև մինչև երեք տարեկան երեխայի խնամքի համար տրամադրվող արձակուրդում գտնվող ծառայողը ենթակա է ատեստավորման ոչ շուտ, քան արձակուրդից վերադառնալուց երեք ամիս հետո: Սույն մասով նախատեսված ծառայողներն ատեստավորման համար ~~կարող~~ **պարտավոր** են դիմել եռամսյա ժամկետի ավարտից հետո երեք տարվա ընթացքում: Արձակուրդում կամ գործուղման մեջ գտնվող կամ ժամանակավոր անաշխատունակ ծառայողը ենթակա է ատեստավորման ոչ շուտ, քան ծառայության անցնելուց երկու ամիս հետո:

~~10~~**11**. Եթե ծառայողը ատեստավորման արդյունքներով ստացել է սույն հոդվածի ~~12-րդ~~ **13-րդ** մասի 1-ին կամ 2-րդ կետով նախատեսված եզրակացությունը, որից հետո նրան տրամադրվել է հղիության և ծննդաբերության, ինչպես նաև մինչև երեք տարեկան երեխայի խնամքի արձակուրդ, ապա հավելավճարի հաշվարկման ժամկետը արձակուրդի ժամանակահատվածում կասեցվում է: Այն վերսկսվում է նշված տեսակի արձակուրդից վերադառնալու օրը:

~~11~~**12**. Ատեստավորման ենթակա ծառայողն ատեստավորման օրվանից ոչ ուշ, քան մեկ ամիս առաջ տեղեկացվում է ատեստավորման անցկացման ժամկետի մասին:

~~12~~**13**. **Սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված** ~~Ա~~**ա**տեստավորման արդյունքներով կայացվում է հետևյալ եզրակացություններից որևէ մեկը՝

1) **համապատասխանում է զբաղեցրած պաշտոնին և** ենթակա է հավելավճար հաշվարկելու.

2) **համապատասխանում է զբաղեցրած պաշտոնին և** ենթակա է շարունակելու հավելավճարի հաշվարկումը.

3) **չի համապատասխանում զբաղեցրած պաշտոնին և** ենթակա չէ հավելավճար հաշվարկելու.

4) **չի համապատասխանում զբաղեցրած պաշտոնին և** ենթակա չէ շարունակելու հավելավճարի հաշվարկումը:

~~13~~**14**. Ատեստավորման մասնակցած այն ծառայողները, որոնց վերաբերյալ կայացվել է սույն հոդվածի ~~12-րդ~~ **13-րդ** մասի 3-րդ կամ 4-րդ կետերով նախատեսված եզրակացությունը, ատեստավորման ~~համար դիմելու~~ ժամկետի ընթացքում ունեն ատեստավորման**ը** ~~համար~~

կրկին ~~դիմելու~~ **մասնակցելու** առնվազն երկու հնարավորություն՝ համաձայն Լիազոր մարմնի ղեկավարի կողմից հաստատված ժամանակացույցի:

~~14~~**15**. Սույն հոդվածի ~~12-րդ~~ **13-րդ** մասով նախատեսված եզրակացությունները հաստատվում են տվյալ ծառայողին պաշտոնի նշանակելու իրավասություն ունեցող պաշտոնատար անձի հրամանով:

~~15~~**16**. Ծառայողը պարտադիր ծանոթացվում է ատեստավորման արդյունքներին և կայացված եզրակացությանը: Ծառայողն իրավունք ունի վերադասության կարգով բողոքարկելու ատեստավորման արդյունքները և կայացված եզրակացությունը՝ դրանց ծանոթանալու օրվանից հետո ոչ ուշ, քան հինգ աշխատանքային օրվա ընթացքում կամ դատական կարգով:

~~16~~**17**. Հավելավճար ստացող ծառայողներին հաշվարկված հավելավճարի վճարումը դադարում է՝ Լիազոր մարմնի ուսումնական հաստատությունում փրկարարական ծառայության պաշտոնի նշանակվելիս:

~~17~~**18**. Ատեստավորման արդյունքներով հաշվարկվող հավելավճարի չափերը և վճարման կարգը սահմանվում են Կառավարության որոշմամբ: Սույն հոդվածի համաձայն հավելավճար հաշվարկվելու դեպքում ծառայողներին «Պետական պաշտոններ և պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» օրենքի 32-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված լրավճարը և զինվորական ծառայության պաշտոն զբաղեցնողների համար նախատեսված հավելումները չեն հաշվարկվում:»:

Հոդված 4. Օրենքի 36-րդ հոդվածի 1-ին մասում՝

1) «ա» կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«ա) բարձրագույն, գլխավոր ավագ և միջին խմբերի պաշտոն զբաղեցնողները՝ ծառայության այլ վայր հավասարազոր պաշտոնին՝ Փրկարար ծառայության տվյալ պաշտոնում առնվազն մեկ տարի ծառայելուց հետո, իսկ կրտսեր խմբի պաշտոն զբաղեցնող ծառայողների փոխադրման դեպքում՝ առնվազն վեց ամիս ծառայելուց հետո.»,

2) «դ» կետն ուժը կորցրած ճանաչել:

Հոդված 5. Օրենքի 61-րդ հոդվածում՝

1) 1-ին մասի «գ» կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«գ) ծառայության մեջ գտնվելու սահմանային տարիքը լրանալու դեպքում.»,

2) 1-ին մասի «ժգ» կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«ժգ) պայմանագրի ժամկետը լրանալու կապակցությամբ կամ պայմանագրի գործողության դադարման դեպքում.»,

3) 1-ին մասը լրացնել «ժդ» կետով՝ հետևյալ բովանդակությամբ.

«ժդ) սույն օրենքի 34.1-ին հոդվածի ~~6-րդ~~ **7-րդ**, ~~8-րդ~~ **9-րդ** կամ ~~9-րդ~~ **10-րդ** մասերով նախատեսված ժամկետներում սույն օրենքի 34.1-ին հոդվածի 1-ին մասով նախատեսված ատեստավորման**ը** ~~համար չդիմելու~~ **չմասնակցելու** ~~դեպքում~~ կամ սույն օրենքի 34.1-ին հոդվածի ~~13-րդ~~ **14-րդ** մասով նախատեսված ժամկետում ատեստավորման**ը** ~~համար~~ կրկին ~~չդիմելու~~ **չմասնակցելու** ~~դեպքում~~ կամ ատեստավորման արդյունքում սույն օրենքի 34.1-ին հոդվածի ~~12-րդ~~ **13-րդ** մասի 3-րդ կամ 4-րդ կետերով նախատեսված եզրակացություն կայացն~~ա~~**վ**ելու դեպքում:»,

4) լրացնել հետևյալ բովանդակությամբ՝ նոր 3-րդ մաս.

«3. **Սույն հոդվածի 1-ին մասի «ժդ» կետի պահանջները չեն տարածվում** ~~Ծառայողները (բացառությամբ~~ Լիազոր մարմնի ուսումնական հաստատություն~~ներ~~ում սովորող~~ը~~, այդ թվում՝ Լիազոր մարմնի կողմից այլ ուսումնական հաստատություններ գործուղված~~ը)~~ **ծառայողների վրա** ~~ազատվում են Փրկարար ծառայությունից սույն օրենքի 34.1-ին հոդվածի 1-ին մասով նախատեսված ատեստավորման համար ոչ ուշ, քան երեք տարվա ընթացքում չդիմելու դեպքում~~:»:

Հոդված 6. Օրենքի 62-րդ հոդվածի 1-ին մասի «ա» և «բ» կետերում «ստորաբաժանման լուծարման կամ վերակազմակերպման» բառերը փոխարինել «կառուցվածքային փոփոխության» բառերով:

Հոդված 7. Օրենքի 71-րդ հոդվածի 2-րդ մասի «բ» կետում «ստորաբաժանման լուծարման կամ վերակազմակերպման» բառերը փոխարինել «կառուցվածքային փոփոխության» բառերով, իսկ «համարժեք» բառը՝ «հավասարազոր» բառով:

Հոդված 8. Եզրափակիչ մաս և անցումային դրույթներ

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում 2023 թվականի մայիսի 1-ից:

2. Փրկարար ծառայության այն ծառայողները, ովքեր ցանկություն են հայտնել սույն օրենքի 34.1-ին 1-ին մասով նախատեսված ատեստավորումը անցնել վերապատրաստումից հետո, այդ իրավունքը կարող են իրականացնել 2024 թվականի հունվարի 1-ից հետո՝ Լիազոր մարմնի ղեկավարի կողմից հաստատված ժամանակացույցի համաձայն:

3. Փրկարար ծառայության գործող կառուցվածքում ներառված, սակայն Ներքին գործերի նախարարության ձևավորումից հետո գործունեությունը դադարեցվող հիմնական մասնագիտական կառուվածքային ստորաբաժանումների ծառայողների ցանկը, ովքեր ենթակա չեն ատեստավորման, սահմանվում է Լիազոր մարմնի ղեկավարի հրամանով:

4. Սույն օրենքից բխող ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերն ընդունվում են սույն օրենքն ընդունվելուց հետո՝ մեկ ամսվա ընթացքում:

ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎՈՒՄ 1-ԻՆ ԸՆԹԵՐՑՄԱՄԲ ԸՆԴՈՒՆՎԱԾ «ՓՐԿԱՐԱՐ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՎ «ՊԵՏԱԿԱՆ ՊԱՇՏՈՆՆԵՐ ԵՎ ՊԵՏԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՈՆՆԵՐ ԶԲԱՂԵՑՆՈՂ ԱՆՁԱՆՑ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» (Կ-535-23.03.2023-ՊԱ-011/1) ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԻ

№	Առաջարկության (փոփոխության, լրացման) հեղինակը	Հոդվածը, կետը, որին վերաբերում է առաջարկությունը	Առաջարկություն (փոփոխություն, լրացում)	Առաջարկության վերաբերյալ հեղինակի (հիմնական զեկուցողի) եզրակացությունը	Առաջարկություններն ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հանձնաժողովի որոշումը
«ՓՐԿԱՐԱՐ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ					
1.	***Կառավարություն, ՀՀ Ազգային ժողովի Պաշտպանության և անվտանգության հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ Անդրանիկ Քոչարյան***	Նախագծի 3-րդ հոդված	Նախագծի 3-րդ հոդվածում առաջարկվում է որպես ատեստավորման նպատակ նախատեսել նաև զբաղեցրած պաշտոնին համապատասխանությունը ստուգելու վերաբերյալ դրույթ: Բացի այդ, առաջարկվում է ատեստավորումը փրկարարական ծառայողների համար սահմանել որպես իմպերատիվ պահանջ:	**Ընդունվել է** Նախագծի 3-րդ հոդվածում, որպես ատեստավորման նպատակ, նախատեսվել է նաև զբաղեցրած պաշտոնին համապատասխանությունը ստուգելու վերաբերյալ դրույթ, ինչպես նաև ատեստավորումը փրկարարական ծառայողների համար սահմանվել է որպես	**Ընդունվել է**

				պարտադիր պահանջ: Մասնավորապես՝ Նախագծի 3-րդ հոդվածով լրացվող 34.1-ին հոդվածի 6-րդ (7-րդ) մասում «ատեստավորման համար դիմում է» բառերը փոխարինվել են «ատեստավորմանը պարտավոր է մասնակցել» բառերով, 8-րդ (9-րդ) մասում «ծառայողներն ատեստավորվում են» բառերը փոխարինվել են «ծառայողները պարտավոր են ատեստավորվել» բառերով, 9-րդ (10-րդ) մասում «կարող են դիմել» բառերը փոխարինվել են «պարտավոր են դիմել» բառերով, 13-րդ (14-րդ) մասում) «համար դիմելու» բառերը հանվել են, իսկ «ատեստավորման համար կրկին դիմելու» բառերը փոխարինվել են «ատեստավորմանը կրկին մասնակցելու» բառերով: Միաժամանակ,	

				խմբագրվել են ատեստավորման արդյունքում կայացվող եզրակացությունների անվանումները: Մասնավորապես՝ Նախագծի 3-րդ հոդվածով լրացվող 34.1-ին հոդվածի 12-րդ (13-րդ) մասի 1-ին և 2-րդ կետերում «ենթակա է» բառերից առաջ լրացվել է «համապատասխանում է զբաղեցրած պաշտոնին և» բառերը, իսկ 3-րդ և 4-րդ կետերում «ենթակա է» բառերից առաջ լրացվել է «չի համապատասխանում զբաղեցրած պաշտոնին և» բառերը:	
2.	***Կառավարություն***	Նախագծի 3-րդ հոդված	Նախագծի 3-րդ հոդվածով լրացվող 34.1-ին հոդվածի 1-ին մասում առաջարկվում է հստակեցնել, թե ատեստավորման պահանջը, որ ծառայողների վրա չի տարածվում:	**Ընդունվել է** Նախագծի 3-րդ հոդվածով լրացվող 34.1-ին հոդվածի 1-ին մասը խմբագրվել է, մասնավորապես «(բացառությամբ՝ Լիազոր մարմնի ուսումնական հաստատությունում	**Ընդունվել է**

				փրկարարական ծառայության պաշտոն զբաղեցնող ծառայողների)» ձևակերպումը նախատեսվել է «խմբերի ծառայողների» բառերից հետո, քանի որ նախատեսվող բացառությունը վերաբերվում է Փրկարար ծառայության բոլոր խմբերի պաշտոն զբաղեցնող ծառայողներին, այլ ոչ թե միայն Փրկարար ծառայության բարձրագույն խմբի պաշտոն զբաղեցնող ծառայողներին:	
3.	***Կառավարություն***	Նախագծի 3-րդ հոդված	Առաջարկվում է Նախագծի 3-րդ հոդվածով լրացվող 34.1-ին հոդվածի 3-րդ մասը նախատեսել առանձին մասերով՝ հաշվի առնելով դրույթում առկա տարբեր իրավակարգավորումները:	**Ընդունվել է** Նախագծի 3-րդ հոդվածով լրացվող 34.1-ին հոդվածի 3-րդ մասը խմբագրվել և շարադրվել է երկու առանձին մասերով (3-րդ և 4-րդ մասեր)՝ հաշվի առնելով դրույթում առկա տարբեր իրավակարգավորումները: Արդյունքում փոփոխվել է նաև նախագծի 3-րդ հոդվածի համարակալումը,	**Ընդունվել է**

				ինչպես նաև Նախագծի ողջ տեքստում կիրառվող հղումները: Նշված փոփոխությամբ պայմանավորված խմբագրվել է նաև Նախագծի 5-րդ հոդվածի 3-րդ կետը, որով լրացում է կատարվում Օրենքի 61-րդ հոդվածում, մասնավորապես, որպես ազատման հիմք նախատեսվում է նաև փրկարարական ծառայողների կողմից ատեստավորում չանցնելը:	
4.	***Կառավարություն, ՀՀ Ազգային ժողովի Պաշտպանության և անվտանգության հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ Անդրանիկ Քոչարյանվ***	Նախագծի 3-րդ հոդված	Առաջարկվում է Նախագծի 3-րդ հոդվածով լրացվող 34.1-ին հոդվածի 3-րդ (4-րդ) մասում հստակեցնել ատեստավորված փրկարարական ծառայողների համար Փրկարար ծառայությունում այլ պաշտոնի նշանակվելիս, այդ թվում՝ պաշտոնի մեկ աստիճանով իջեցման դեպքում, փրկարարական ծառայողների ատեստավորման հետ կապված հարաբերությունները:	**Ընդունվել է** Նախագծի 3-րդ հոդվածով լրացվող 34.1-ին հոդվածի 3-րդ (4-րդ) մասում «ատեստավորման ենթակա չեն,» բառերից հետո լրացվել է «իսկ ատեստավորված ծառայողները պահպանում են ատեստավորման արդյունքները,» բառերը:	**Ընդունվել է**

5.	***Կառավարություն, ՀՀ Ազգային ժողովի Պաշտպանության և անվտանգության հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ Անդրանիկ Քոչարյան***	Նախագծի 3-րդ հոդված	Նախագծի 3-րդ հոդվածով լրացվող 34.1-ին հոդվածի 6-րդ (7-րդ) մասում «կարող է ատեստավորում անցնել» բառերը կարող են ունենալ հայեցողական նշանակություն, ուստի առաջարկվում է խմբագրել նշված դրույթը՝ իրավական որոշակիությունն ապահովելու և տարակարծիք մեկնաբանություններից խուսափելու համար:	**Ընդունվել է** Նախագծի 3-րդ հոդվածով լրացվող 34.1-ին հոդվածի 6-րդ (7-րդ) մասը խմբագրվել է: Մասնավորապես, «համապատասխան պաշտոնի առաջին անգամ նշանակված ծառայողը կարող է ատեստավորում անցնել պաշտոնի նշանակվելուց ոչ շուտ, քան» բառերը փոխարինվել են «առաջին անգամ պաշտոնի նշանակված ծառայողը ենթակա է ատեստավորման ոչ շուտ, քան պաշտոնի նշանակվելուց» բառերով:	**Ընդունվել է**
6.	***Կառավարություն, ՀՀ Ազգային ժողովի Պաշտպանության և անվտանգության հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ Անդրանիկ***	Նախագծի 3-րդ հոդված	Նախագծի 3-րդ հոդվածով լրացվող 34.1-ին հոդվածի 8-րդ (9-րդ) մասում «ատեստավորման համար դիմելու իրավունքը ծառայողի մոտ ծագում է» բառերն առաջարկվում է խմբագրել՝ տարընկալումներից խուսափելու համար:	**Ընդունվել է** Նախագծի 3-րդ հոդվածով լրացվող 34.1-ին հոդվածի 8-րդ (9-րդ) մասի «ատեստավորման համար դիմելու իրավունքը ծառայողի մոտ ծագում է» բառերը փոխարինվել են «ծառայողը ատեստավորման համար	**Ընդունվել է**

	Քոչարյան			կարող է դիմել» բառերով:	
7.	***Կառավարություն***	Նախագծի 3-րդ հոդված	Առաջարկվում է Նախագծի 3-րդ հոդվածով լրացվող 34.1-ին հոդվածի 12-րդ (13-րդ) մասում լրացնել «սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված» բառերը:	**Ընդունվել է** Նախագծի 3-րդ հոդվածով լրացվող 34.1-ին հոդվածի 12-րդ (13-րդ) մասում «Ատեստավորման» բառը փոխարինվել է «Սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված ատեստավորման» բառերով:	**Ընդունվել է**
8.	***Կառավարություն***	Նախագծի 5-րդ հոդված	Առաջարկվում է Նախագծի 5-րդ հոդվածով լրացվող 4-րդ կետը խմբագրել՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ նույն հոդվածի 3-րդ կետով արդեն իսկ նախատեսվում են նշված կարգավորումները:	**Ընդունվել է** Խմբագրվել է նախագծի 5-րդ հոդվածով լրացվող 4-րդ կետը՝ անհարկի կրկնություններից խուսափելու համար: Մասնավորապես՝ նույն հոդվածի 3-րդ կետով նախատեսվող կարգավորումներով արդեն իսկ սահմանվում է Փրկարար ծառայությունից ազատելու հիմքերը:	**Ընդունվել է**
9.	***Կառավարություն, ՀՀ Ազգային ժողովի Պաշտպանության***	Նախագծի 4-րդ հոդված	Առաջարկվում է Նախագծով նախատեսել դրույթ, որով ատեստավորման պահանջը կտարածվի նաև Փրկարար ծառայության տնօրենի տեղակալի պաշտոն զբաղեցնող	**Ընդունվել է** Նախագծի 3-րդ հոդվածով լրացվող 34.1-ին հոդվածի 1-ին մասում	**Ընդունվել է**

	և անվտանգության հարցերի մշտական հանձնաժողովի փոխնախագահ Արմեն Խաչատրյան		ծառայողների համար՝ անհավասար մոտեցումից խուսափելու, և ղեկավար պաշտոններն ավելի որակյալ և բանիմաց ծառայողներով համալրելու նպատակով:	«Փրկարար ծառայության» բառերից հետո լրացվել է «տնօրենի տեղակալների, փրկարար ծառայության» բառերը: Ներկայացված առաջարկությամբ պայմանավորված լրացումներ է կատարվել նաև «Պետական պաշտոններ և պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» օրենքում լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծում: Մասնավորապես, Նախագծի 1) 1-ին հոդվածում «, փրկարարական ծառայողների» բառերից առաջ լրացվել է «, ինչպես նաև փրկարար ծառայության տնօրենի տեղակալների» բառերը, 2) 2-րդ և 3-րդ հոդվածներում «,	

				փրկարարական ծառայողներին» բառերից առաջ լրացվել է «փրկարար ծառայության տնօրենի տեղակալներին,» բառերը:	
«ՊԵՏԱԿԱՆ ՊԱՇՏՈՆՆԵՐ ԵՎ ՊԵՏԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՈՆՆԵՐ ԶԲԱՂԵՑՆՈՂ ԱՆՁԱՆՑ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ					
1.	***Կառավարություն***		Առաջարկվում է օրենքների նախագծերի փաթեթը լրացնել նոր օրենքի նախագծով՝ արդեն իսկ ընդունված օրենքների դրույթների հետ հակասությունը, ինչպես նաև ուժի մեջ մտնելու հետ կապված ժամանակային խզումը բացառելու նպատակով: **Հաշվի առնելով վերոգրյալը նախագիծը ներկայացվում է հետևյալ բովանդակությամբ՝** «ՆԱԽԱԳԻԾ **ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ** **«ՊԵՏԱԿԱՆ ՊԱՇՏՈՆՆԵՐ ԵՎ ՊԵՏԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՈՆՆԵՐ ԶԲԱՂԵՑՆՈՂ ԱՆՁԱՆՑ**	**Ընդունվել է** Կատարավել է համապատասխան փոփոխություն:	**Ընդունվել է**

			ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» 2023 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 1-Ի ՀՕ-41-Ն ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ **Հոդված 1.** «Պետական պաշտոններ և պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» օրենքում լրացումներ և փոփոխություն կատարելու մասին» 2023 թվականի մարտի 1-ի ՀՕ-41-Ն օրենքի (այսուհետ՝ օրենք) 1-ին հոդվածում «(բացառությամբ բարձրագույն խմբի պաշտոններ զբաղեցնող ծառայողների)» բառերից հետո լրացնել «, ոստիկանության ծառայողների (բացառությամբ ոստիկանության պետի պաշտոն զբաղեցնող ծառայողի), փրկարար		

			ծառայության տնօրենի տեղակալների, փրկարարական ծառայողների» բառերը: **Հոդված 2.** Օրենքի 7-րդ հոդվածի 6.1 մասում «(բացառությամբ բարձրագույն խմբի պաշտոններ զբաղեցնող ծառայողների)» բառերից հետո լրացնել «, ոստիկանության ծառայողների (բացառությամբ ոստիկանության պետի պաշտոն զբաղեցնող ծառայողի), փրկարար ծառայության տնօրենի տեղակայների, փրկարարական ծառայողների» բառերը: **Հոդված 3.** Օրենքի 16-րդ հոդվածի 5.1-ին մասում «(բացառությամբ բարձրագույն խմբի պաշտոններ զբաղեցնող ծառայողների)» բառերից հետո լրացնել «, ոստիկանության ծառայողների (բացառությամբ ոստիկանության պետի պաշտոն զբաղեցնող ծառայողի),		

			փրկարար ծառայության տնօրենի տեղակալների, փրկարարական ծառայողների» բառերը: **Հոդված 4.** Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:»		